

## ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

Ի ՄԱՅՅԻՍԻ ԷՁ 160.

Երկու երեւելի կոյր զօրավարաց մէկն էր Վենեակոյ Հասարակապետութեան քաջ եւ մեծանուն դուքսը Հենրիկոս Տանսոնոյ, որ 94 տարեկան ալեղարգ Հասակին մէջ գրեաց տիւրեց Կոստանդնուպօլսոյ 1204-ին: — Իսկ միւսն էր Բելիսարիոս յոյն զօրավարը, որ Ալիքիէէն վանեց Վանդալները 555-ին, Հռոմն ազատեց երկու անգամ (540-ին եւ 547-ին). յալթեց Պարսից Խոսրով թագաւորին (545-ին), եւ զօրացը պակասելուն պատճառաւ Հարկադրեցաւ իւր աշխարհակալութիւններէն ետ կենալու: Կըսեն թէ Յունաց կայսրը Յուստինիանոս՝ Հաւատալով Բելիսարիոսի զոյարտաց խօսքերուն՝ աչուրները կուրացուց:

ՅՕԴՈՍՏՈՍԻ ԷՁ 248.

Դանիէլ մարգարէն, ազատիչ անմեղին նուշանայ՝ Բաբելացւոց գերութեան ժամանակը, որ հեթանոսաց հալածանքներէն ազատեցաւ, նաբուգոդոնոսոր ու Բաղտասար թագաւորաց գլխուն գալու պատիժները գուշակեց, Բաբելացւոց քուրմերուն խարդախութիւնները խայտառակեց, եւ չորս մեծամեծ ինքնակալութեանց վրայ մարգարէական տեսիլք մը տեսաւ:

Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԷՁ 267.

Ներոն կայսրը, որոյ անունէն ելած կհամարուի մեր լեզուին մէջ Նեռն բառը, որովհետեւ Քրիստոսի սուրբ եկեղեցւոյն յիսերիմ հալածիչ եղաւ. Յունաստան ճամբորդութիւն ընելով, քաջ երաժիշտ եւ բանաստեղծ երեւնալու բաղձանօք՝ շսղաքորթներէն 1800 պտակ ընդունեցաւ: Թէտարոններու մէջ սրինգ փրչելով ու կաքաւելով եւ ամէն տեսակ անա-

ռակութիւն ընելովը, եւ մանաւանդ իւր մայրը՝ Ագգրիպալինան՝ եւ վարժապետը Սենեկան մեռցընել տալովը յիրաւի հրէշ կամ ցուցանք եղաւ աշխարհի, եւ վերջապէս ծերակուտէն եւ ամենէն դատապարտուած՝ քարանձաւ մը փախաւ, այն տեղը ուղեց ինքզինքը սպաննել ու չկրցաւ սիրտ ընել. պէտք եղաւ իւր Եպափրոգիտոս ատենագրիւրը ձեռքին ոյժ տայ, եւ այնպէս մեռաւ չարաչար:

Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ ԷՁ 344.

Օլեկ մեծ իշխանն Ռուսաց, որ իւր թշնամեաց յաղթեց, Կոստանդնուպօլսոյ վրայ եւս դիմեց 2000 նաւակով (911-ին), եւ Լեւոն կայսեր հետ դաշնագրութիւն ըրաւ: Կըսեն թէ մէկը գուշակեր էր իրեն որ իւր ձիէն պիտի սպաննուի. ինքը մեռցընել տուաւ ձին, եւ օր մը դաշտին մէջ անոր չոր ոսկոր դարձած գլխուն զարկաւ ոտքով արհամարհանօք. գլխուն մէջէն օձ մը դուրս ցաւրեց, խայթեց զՕլեկ, եւ անկից մեռաւ:

Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 368.

Լեւոն Զ, մեր վերջին թագաւորը, որ Եպիպոս գերի տարուեցաւ ու բանտ դրուեցաւ. յետոյ Եւրոպա դիմեց, իւր իմաստութեամբը՝ մեծանձնութեամբն ու գոթադուրթեամբը մեծ պատիւ ունեցաւ Դաղդիոյ եւ Սպանիոյ թագաւորաց առջեւը. վախճանեցաւ Իֆարիզ 1595-ին, որով եւ վերջացաւ Հայոց թագաւորութիւնը, Լեւոնի մարմարինէ արձանը կայ Վերսայլի թանգարանին մէջ, ինչպէս նաեւ գերեզմանաքարը Սէն-Տընիի դամբարանաց մէջ: Կիլիկիոյ Տօրոս լեռներուն մէջ այս տարիներս եղած շարժմունքը ամենուն յայտնի է: